

«Վուդրո Վիլսոնի ժառանգություն» հիմնադրամի նախագահ Դոնալդ Վիլսոն Բուշի եզրափակիչ ելույթը Երևանում, «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» համաժողովի ժամանակ (2015 թ. ապրիլի 22-24)

Բարի օր, Ձերդ գերազանցություն, պրն նախագահ Սարգսյան, Կառավարության անդամներ, հարգարժան հյուրեր, տիկնայք և պարոնայք:

Իմ անունը Դոնալդ Վիլսոն Բուշ է, և ինձ եզակի բախտ է վիճակվել ազգակցական կապ ունենալու ԱՄՆ-ի առնվազն երեք նախագահների հետ, ովքեր ներկայացնում են ամերիկյան արտաքին քաղաքականության արտաքուստ հակասական թվացող երկու գաղափարախոսական ուղղությունները՝ քաղաքական ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ (ԻԴԵԱԼԻԶՄ) և քաղաքական ԻՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ (ՌԵԱԼԻԶՄ):

Այսօրվա ելույթները լսելուց հետո ես այժմ համոզված եմ, առավել քան երբևէ, որ այդ գաղափարական ուղղություններից միայն մեկը՝ գաղափարապաշտությունն է ի գործունեղնչելու այն արդյունավետ առաջնորդությունը, որն անհրաժեշտ է համախմբելու միջազգային կամքը՝ ցեղասպանության հարցին միջամտելու և այդ հանցանքը գործողներին պատասխանատվության կանչելու համար: Բայց, եթե մենք հույս ունենք երբևէ վերացնելու ցեղասպանության հետևանքները և պատճառները, չպետք է դիմենք մյուս ծայրահեղությանը՝ այս գործընթացից դուրս թողնելով իրապաշտությունը:

Այս խնդրի միակ լուծումը քաղաքական առաջնորդների այնպիսի նոր սերունդ կրթելն է, որն այս երկու մոտեցումների կարևոր հավասարակշռությունը պահպանելու կարողություն ունի:

Ինչպես ասել է Հենրի Դեյվիդ Թորոն, «Եթե դու քո երազանքը կառուցել ես երկնքում, դու կորած չես: Այժմ ժամանակ գտիր՝ կառուցելու դրան հասցնող սանդուղքը»:

Թեև որպես զուտ իմաստասիրական եզրույթներ այս երկու բառերը՝ գաղափարապաշտությունն ու իրապաշտությունը (իդեալիզմն ու ռեալիզմը), բավական ճկուն են և կարող են առանց լուրջ հետևանքների հարմարեցվել

խոսակցության համարյա ամեն տեսակի, սակայն որոշ **բարձրաշխարհիկ** քաղաքական, տնտեսական և ռազմական շրջանակներում ընդունված է համարել, որ գաղափարապաշտությունը, ինչպես նաև ցանկացած մոտեցում նրան, թե իրերն «ինչպիսին պիտի լինեն», վտանգավոր միջոց է արտաքին քաղաքականության հարցերի լուծման համար, քանի որ գաղափարապաշտությունն առաջնորդների միտքը շղարշում է այնպիսի քաղաքական հետևանքների հավանականությամբ, որոնք չեն համապատասխանում առկա **քաղաքական** հանգամանքներին: Նրանք գտնում են, որ գաղափարապաշտությունը կարող է քաղաքական առաջնորդներին անհաջողության մատնել դիվանագիտական հարաբերություններում, քանի որ այն նրանց զրկում է ճկունությունից և գոռոզ դարձնում, ինչպես որ Վուդրո Վիլսոնն է ներկայացվում Փարիզի խաղաղության կոնֆերանսում հանդես գալիս Առաջին համաշխարհային պատերազմից հետո:

Ծաղրված այս պատմության պատճառով բազմաթիվ խստադատ գիտնականներ ու հարգարժան մասնագետներ մեղադրում են Վիլսոնին նրա գաղափարապաշտության համար: Ավելին, նրանք նրա այս թերությունը ցույց տալու համար վկայաբերում են նրա ձախողված ջանքերը՝ ցեղասպանությունից հետո հայերին իրենց նախնիների հայրենիք վերադարձնելու, և նրա անհաջողությունը՝ ամբողջապես վերականգնելու նրանց մշակութային և տնտեսական կենսունակությունը:

Եվ ընդհակառակն՝ իրապաշտությունը բազմաթիվ քաղաքական, կառավարական և քաղաքագիտական նշանավոր գործիչների կողմից դիտվում է որպես շատ ավելի ուղղակի և գործնական մոտեցում արտաքին քաղաքական վճռորոշ հարցերի լուծման համար, քանի որ այս համոզման տեր առաջնորդներն ունակ են տեսնելու իրերն այնպես, «ինչպես դրանք կան», և ոչ թե այնպես, «ինչպես կփափագեին դրանք տեսնել»: Նրանց միակ խնդիրը առկա հանգամանքներին ճիշտ պատասխան գտնելն է՝ ազատ լինելով գաղափարապաշտական որևէ կապանքից:

Բանավեճի մյուս կողմում թերևս նույնքան գիտնականներ ու մասնագետներ էլ մեղադրում են նոր-պահպանողականներին՝ Սառը պատերազմից ի վեր նախագահ Այզենհաուերի ռազմարդյունաբերական համալիրը մշտապես վերազինելու և ռազմարդյունաբերական պատերազմի մեքենայի վերածելու համար:

Թեև այս հակիրճ խոսքի նպատակների մեջ չի մտնում լիարժեքորեն ներկայացնել այս երկու ուղղությունները, այնուամենայնիվ, ինձ համար հաճույք է ձեռք հետ լինելն այսօր

այստեղ՝ այս պատմական վայրում՝ համառոտաբար քննարկելու յուրաքանչյուր երկրից, հատկապես ԱՄՆ-ից և Ռուսաստանից, աշխարհի համար երիտասարդ առաջնորդների նոր սերունդ աճեցնելու և կրթելու կարևորությունը, առաջնորդներ, ովքեր կարող են հասնել գաղափարապաշտության և իրապաշտության միջև անհրաժեշտ հավասարակշռությանը, երբ սկսում են գնահատել այս երկու ուղղությունների նշանակությունը արտաքին քաղաքականության մեջ, հատկապես երբ դա վերաբերում է ազատ բարոյական գործակցության իրենց սեփական զգացումին և իրենց՝ որպես առաջնորդների, անձնական հատկանիշների զարգացմանը:

Այս առավոտ ձեզ ուղղված իմ խոսքի խորագիրը հետևյալն է՝ «Վիլսոնյան գաղափարապաշտության վերակենդանացումն իրապաշտ աշխարհում. ցեղասպանության զոհերի փոխհատուցումն ըստ արևմտյան քաղաքացիական ավանդույթի»:

Թեև սա երկարաշունչ խորագիր է, սակայն ես միտումնավոր եմ այն ընտրել՝ քաղաքական գաղափարապաշտությունը վերստին ներկայացնելու համար վիլսոնյան ավանդույթի համաձայն՝ որպես անհրաժեշտ հակակշիռ «փախչող իրապաշտության», որը դարձել է ամերիկյան արտաքին քաղաքականության բնութագրիչն այն ժամանակից ի վեր, երբ Հենրի Քիսինջերը Սառը պատերազմի ժամանակ վերացրեց այդ հավասարակշռությունը: Սա նաև իմ մեկնակետն է՝ քննարկելու համար այն եզակի դերը, որն, ըստ իս, հանկարծորեն վիճակվել է Հայաստանի երիտասարդ և անկախ Հանրապետությանը՝ խաղալու աշխարհի բեմահարթակին, և որը վերաբերում է այն չբավարարված պահանջներին, որ նա ներկայացնում է Թուրքիայի դեմ, քանի որ վերջինս արհամարհում է իր նախորդների ծրագրած ու իրականացրած Հայոց ցեղասպանության պատճառներն ու հետևանքները:

Վերջին 100 տարվա ընթացքում արհամարհված և անտեսված լինելով գլխավորապես իր համեմատաբար սահմանափակ տնտեսական հնարավորությունների պատճառով, որոնք թույլ չեն տվել տարածաշրջանում արդյունավետ աճ ապահովելու՝ Հայաստանի Հանրապետությունը, այնուամենայնիվ, ներկայացել է որպես վեց աշխարհամասերում սփռված ավելի քան 10 միլիոն հոգի կազմող ժողովրդի հաստատամտության և գոյաբանական կամքի համաշխարհային խորհրդանիշ, մի ժողովրդի, որը հանկարծ արթնացրել է աշխարհի խիղճը: Ներկա արդյունքին ո՛չ փոքր չափով նպաստել են նաև Վուդրո Վիլսոնի կյանքը, ժառանգությունն ու գաղափարապաշտությունը:

Բայց ես այստեղ եմ՝ ասելու, որ Հայաստանի, ինչպես նաև աշխարհի համար ավելի լավ կլիներ, եթե Վուդրո Վիլսոնը իսկապես հասներ ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ առկա նշաձև երկու ուղղությունների միջև վճռորոշ հավասարակշռությանը:

Ինչպես ամենքս գիտենք, նախագահ Վիլսոնը 1915-ին սկսեց սատարել հայերի գոյատևման պայքարին՝ որոշում կայացնելով պաշտպանել նրանց հարցը արդարության և բարի կամքի գաղափարապաշտական բարձր սկզբունքներով: Բայց ինչպես պատմությունը հստակորեն ցույց է տալիս, կոնգրեսական իրապաշտները նրան մի լավ խեղճացրին, և նրա հսկայական ջանքերը՝ ժամանակակից թուրքական պետության դեմ հայկական պահանջները բավարարելու համար, կուլ գնացին ավելի մեծ պետությունների տնտեսական շահերին և աշխարհաքաղաքական դրությանը, ինչն էլ վերջո հանգեցրեց Սառը պատերազմին և Հայաստանի փոքրացմանն ու տարածաշրջանային մեկուսացմանը:

Առ այսօր փոքրիկ Հայաստանի Հանրապետությունը դեռ շրջափակված է և հենց իր գոյատևման համար կախված է շրջապատող պետությունների հետ հարաբերություններից և, այո՛, շարունակում է հավատալ, որ է վերջո արդարությունը հաղթանակելու է:

Այսօր ես ուզում եմ գովեստի խոսք ուղղել նախագահ Սարգսյանին, որ իր ժողովրդի անցյալի հարուստ ժառանգությունը պատվելուն զուգընթաց՝ նաև դեպի այս հավատը կենդանի պահող ապագան է առաջնորդում իր ժողովրդին՝ նրան տալով սրա համար անհրաժեշտ ուժն ու տոկունությունը:

Նաև ուզում եմ նրան դրվատել գաղափարապաշտության և իրապաշտության միջև վճռորոշ հավասարակշռությունը պահպանելու համար, որը պահանջվում է Հայաստանում լավագույն կրթական միջոցները կիրառելու համար, ինչը կաճեցնի այս հավատը կենդանի պահող առաջնորդների մի նոր սերունդ:

Ես վստահ եմ, որ մեծ վշտերի միջով անցած բոլոր փոքր ազգերի այս հավատն արդար ապագայի հանդեպ՝ ընդդեմ նրանց, ովքեր կփորձեն տիրել իրենց, հիմնված է այն

ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ վրա, որը պահպանիչն է արևմտյան քաղաքացիական ավանդույթի:

Ես վստահ եմ, որ այս հավատը հիմնված է այն ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ վրա, որը կապում է ժողովրդավար ժողովուրդներին իրենց Սահմանադրությանը:

Ես վստահ եմ, որ այս հավատը հիմնված է այն ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ վրա, որը ժողովրդավարության պայմաններում պահում է յուրաքանչյուր քաղաքացուն սահմանների մեջ՝ այն խոստումով, որ ինչ-որ տեղ ազնիվ դատարան գոյություն ունի՝ ճշմարիտ արդարադատությամբ՝ բավարարելու անարդարության դեմ ամեն պահանջ՝ տուժած կողմերին սփոփելու համար: Մինչդեռ, երբ հանցագործները չեզոք դատարանի առաջ երբեք չեն կանգնում՝ բացատրելու իրենց գործողությունների պատճառները, հանցագործության զոհերը զրկվում են այս կատարյալ գաղափարի հոգով եղած օրենքով հատուցման իրենց իրավունքից, և արդարության հաղթանակի հանդեպ նրանց հավատն ի վերջո կորչում է:

Հատկապես երբ խոսում ենք ցեղասպանության հանցագործության մասին, օրենքով հատուցումը զոհերին կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ հանցագործներին ներկայացվում է նրանց հանցանքի վկայությունը իրավական ուժ ունեցող դատարանում: Այդուհետ նրանց մեղքի դատապարտումը պիտի կատարվի յուրաքանչյուր դեպքի համար, և ապա փոխհատուցում պիտի կատարվի յուրաքանչյուր զոհի համար հստակ հիմքերով: Փոխհատուցման չափը կարող է մեծ կամ փոքր լինել, բայց պատշաճ գործընթացի կանխատեսելի ժամանակամիջոցում առանց փոխհատուցման ընդունման՝ արդարությունը չի կարող վերականգնվել: Հետևաբար, հանցագործության զոհերը կարիք չունեն իրենց բավարարված համարելու, քանի դեռ փաստացիորեն նրանք բավարարված չեն:

Հարցն այն է, թե ինչպես պիտի ավարտին հասցնենք իրավունքների վերականգնման ընթացքի իրական ճանապարհ գտնելու գործը Ցեղասպանության մեկուկես միլիոն հայ զոհերի և նրանց ժառանգների անունից, ովքեր թուրքական պետության դեմ մեծ պահանջներ ունեն՝ կապված մի շարք հանցագործությունների հետ՝ ներառյալ անօրինական բռնազավթումը, հրահրված հարձակումները, գողությունը, բռնաբարությունը, մարդասպանությունը, սովի մատնումը, արքայությունը և այլն՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ժամանակակից պատմությունը վկայում է, որ աշխարհի ազգերի համայնքը դանդաղորեն բռնել է իր իրավական համակարգերը դեպի այն իդեալական նպատակն ուղղորդելու ճանապարհը, որը դատ է սահմանում յուրաքանչյուր հանցագործության դիմաց: Ի՞նչ է ասում հին ասացվածքը. «Ոչ մի հանցանք երբեք պիտի չմնա անպատիժ»:

Սակայն ներկայում, արտաքին քաղաքականության իրական աշխարհում, դեռևս դատաիրավական հարցեր են բարձրացվում այն միջպետական հաստատությունների առնչությամբ, որոնք արդեն իսկ ստեղծված են լսելու Հայկական հարցը և վկայելու հայերի կորուստների մասին: Դժբախտաբար, Թուրքիայի հանրապետությունն ու ԱՄՆ-ն այն պետությունների թվում են, որոնք դեռ դիմադրում են այս կատարյալ դրությանը հասնելու որևէ պարտավորության: Բայց միշտ չէ, որ սա է եղել պատճառը:

Անցյալ շաբաթ ԱՄՆ կոնգրեսական հարգելի Ադամ Շիֆը մասնակցեց Կալիֆոռնիայի Բուրբանկ քաղաքի Սբ Ղևոնդ հայկական եկեղեցում կազմակերպված մի միջոցառման: Կոնգրեսական Շիֆը, պաշտպանելով Հայկական հարցը, ստիպված էր հետևյալն ասելու ԱՄՆ-ի ներկա դիրքորոշման մասին.

(մեջբերում եմ) «Թեև մեր երկիրը [ԱՄՆ-ն] ժամանակին 1,5 մլն հայերի հանդեպ օսմանյան թուրքերի իրագործած ցեղասպանության հանցագործության վկան էր, սակայն այսօր միայն հանդիսատես է: Ես աշխատում եմ այն ուղղությամբ, որ մեր կառավարությունը հանդիսատեսի կարգավիճակից վերադառնա վկայի կարգավիճակին» (մեջբերման ավարտ):

Երբ ԱՄՆ-ի մասին նա խոսում է որպես Հայոց ցեղասպանության հանցագործության վկայի, անշուշտ նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմի և դրան անմիջապես հետևող ժամանակաշրջանը, երբ Վուդրո Վիլսոնը՝ ԱՄՆ-ի 28-րդ նախագահը, չնայած իր բոլոր թերացումներին, պաշտպանում էր վերապրած հայերի կյանքը:

Թեև նա չհաջողեց համախմբելու միջազգային կամքը՝ միջամտելու Հայոց ցեղասպանության հարցին և դրա մեղավորներին պատասխանատվության

ենթարկելու, սակայն նա հաջողեց ներշնչելու առաջնորդների մի նոր սերնդի՝ շարունակելու այս ազնիվ ու մեծ գործը:

Վերջին հաշվով՝ սա արտաքին քաղաքականության մեջ ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ուժի հստակ վկայություն է:

Հարյուր տարի անց այն բանից հետո, որ քաղաքական իրապաշտության օգտին անհավասարակշռություն հաստատվեց, որը մեզ դեռ ստիպում է հարթ ճանապարհ գտնել տուժած կողմի՝ հայերի անունից իրավական փոխհատուցման համար, ես պատրաստվել եմ նվիրելու իմ ժամանակը, ջանքերն ու միջոցները՝ կրթելու առաջնորդների մի նոր սերունդ, որը վերջապես կկարողանա հասնել այդ նպատակին:

Ո՛չ անորոշ պայմաններով և ո՛չ փոքր չափով է, որ հայ ժողովրդի հարուստ պատմությունը՝ որպես մարդկային քաղաքակրթության օրրանի ժողովրդի, մղում է մեզ հավատարիմ մնալու այս ընթացքին, մինչև որ կատարելապես իշխի անկողմնակալ, ամբողջական և համաշխարհային արդարությունը՝ այն 1,5 մլն կյանքերի համար, որոնց հիշատակը պիտի հարգենք ուրբաթ՝ ապրիլի 24-ին:

Սակայն, սկսած ապրիլի 25-ի առավոտյան նախաճաշից և սուրճից, ես դարձյալ իմ ներուժն ու կյանքի մնացած մասը նվիրում եմ Հայկական հարցի պաշտպանության գործին՝ ողջ մարդկության անունից, և հրավիրում ձեզ նույնն անելու: Այս հարյուրամյակի հիշատակությունը ոչ մի բանի վերջն էլ չէ՝, ընդհակառակը՝ այն նշանավորում է նոր սկիզբը վերանորոգված ջանքերի՝ հիշեցնելու համար ինքներս մեզ և աշխարհին, որ Հայաստանը կարևոր է, որովհետև կարևոր է ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ: Հայաստանը կարևոր է, որովհետև կարևոր է ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ:

Խնդրում եմ, կանգնե՛ք իմ կողքին, ինչպես ես էլ հայ ժողովրդի կողքին եմ կանգնում, ճիշտ ինչպես որ Վուդրո Վիլսոնն արեց՝ նվիրումով ջանալով մեր երեխաներին ու թոռներին ավանդել ավելի խաղաղ աշխարհ:

Ձեր նվիրումը ոչ միայն ցանկալի է, այլև անհրաժեշտ՝ այս նպատակին հասնելու համար:

Ինչպես ասել է Յոհան Վոլֆգանգ Գյոթեն, «Մինչև մեկը նվիրվում է, կան տարակուսանք, հետ քաշվելու առիթներ, միշտ անարդյունավետություն: Մակայն, երբ խոսքը նախաձեռնության ու ստեղծարարության մասին է, կա մեկ տարրական ճշմարտություն, որն անգիտանալը սպանում է անթիվ գաղափարներ և հիանալի ծրագրեր: [Այդ ճշմարտությունը հետևյալն է]. այն պահից, որ մեկն իրեն նվիրում է մի գործի, Նախախնամությունը նույնպես հետևում է դրան, և ամեն տեսակ դիպվածներն ու հանդիպումները, ինչպես նաև ֆինանսական օգնությունն առաջդ են գալիս՝ քեզ օգնելու, ինչն այլ պարագայում երբեք չէր պատահի: Ուստի ինչ որ կարող ես անել կամ երագում ես անել, սկսիր անել հիմա՝ Որովհետև վճռականությունն իր մեջ ունի հանճար, զորություն և մոգականություն»:

DWB